

Քննարկված է

«Գեղարքունիքի տարածաշրջանային

պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի

կատարման խորհրդի

«11» «01» 2022 թ. նիստում

Հաստատված է

«Գեղարքունիքի տարածաշրջանային

պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի

տնօրեն



« ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ

ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ»

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ /փոփոխություն/

## I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 Քոլեջի ուսանողական խորհուրդը(այսուհետև՝ Խորհուրդ) ինքնակառավարման, ուսանողներին միավորող, նրանց շահերը պաշտպանող, ընտրովի ներկայացուցչական մարմին է:

1.2 Խորհրդի լիազորություններն ու գործունեությունը, ՀՀ օրենսդրությանը և կանոնադրական ակտերին համապատասխան, սահմանվում են քոլեջի կանոնադրությամբ, քոլեջի ղեկավար մարմինների որոշումներով, ինչպես նաև սույն Կանոնակարգով:

1.3 Խորհուրդն ապահովում է քոլեջի ուսանողական ինքնակառավարման գործընթացները քոլեջի ուսանողների շրջանում և պաշտպանում է վերջիններիս շահերը:

1.4 Քոլեջի կառավարման մարմինների, նրանց ստորաբաժանումների, քոլեջում գործող, ինչպես նաև արտաքոլեջային կրթական, մշակութային, հոգևոր, բարեգործական և այլ կազմակերպությունների, պետական մարմինների և անհատ անձանց հետ Խորհրդի հարաբերությունները իրականացվում են քոլեջի Կանոնադրության և սույն Կանոնակարգին համապատասխան:

1.5 Սույն Կանոնակարգը հաստատվում է քոլեջի Կառավարման խորհրդի և Տնօրենի կողմից:

## II. ԽՈՐՀՐԴԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

2.1 Խորհրդի հիմնական նպատակն է նպաստել ուսանողների ակտիվ մասնակցությանը քոլեջի կյանքին:

2.2 Իր նպատակների իրականացման համար Խորհուրդն ունի հետևյալ առաքելությունը՝

2.2.1 Մասնակցել ուսումնական գործընթացի կատարելագործմանը:

2.2.2 Տարածել տեղեկատվություն ուսանողների շրջանում:

2.2.3 Ներկայացնել և պաշտպանել ուսանողների շահերը քոլեջի կառավարման մարմիններում:

2.2.4 Ուսանողական խորհրդում ստեղծել և զարգացնել համապատասխան ներքին կառույցներ:

2.2.5 Ներկայացնել առաջարկներ ուսուցման որակի բարձրացման վերաբերյալ և քոլեջի համապատասխան մարմինների կողմից վավերացումից հետո նպաստել դրանց ընդունմանն ու հետևողական իրականացմանը:

2.2.6 Աջակցել քոլեջում մարմնակրթության և սպորտի զարգացմանը:

2.2.7 Կազմակերպել ուսանողական և երիտասարդական տոներին նվիրված միջոցառումներ:

2.2.8 Աջակցել հանգստի և ժամանցի կազմակերպմանը:

2.3 Առաջարկված նպատակներին հասնելու և առաջադրված խնդիրների լուծման համար Խորհուրդն իրավասու է.

2.3.1 Մշակելու և իրականացնելու միջոցառումներ՝ ուսանողների քոլեջի կանոնադրությամբ ապահովվող իրավունքների պաշտպանության համար:

2.3.2 Օգտագործելու քուլեջի տեղեկատվական միջոցները՝ ուսանողական կյանքը համակողմանիորեն լուսաբանելու, ինչպես նաև Խորհրդի որոշումներն օպերատիվ կերպով ուսանողությանը հասցնելու համար:

2.3.3 Ստեղծելու քուլեջի կանոնադրությամբ չբացառվող ուսանողական, մշակութային, մարզական միություններ, ըստ նախասիրությունների ակումբներ, ուսանողական օլիմպիադաներ, ուսանողական առօրյան հազեցած դարձնող այլ միջոցառումներ:

2.3.4 Ներկայացուցչական մարմիններում մասնակցելու ուսանողների շահերը շոշափող նորմատիվ ակտերի մշակմանը, կատարելագործմանը և ընդունմանը:

2.3.5 Քուլեջի կանոնադրությանը համաձայն՝ ունենալու ուսանողության ներկայացուցչություն քուլեջի կառավարման մարմիններում՝ ապահովելով ուսանողների մասնակցությունը քուլեջի գործունեությանը վերաբերող կարևորագույն հարցերի լուծմանը:

### **III. ԽՈՐՀՐԴԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ**

3.1 Խորհուրդը ձևավորվում է քուլեջի համապատասխան կուրսերից ներկայացուցիչների ընտրության սկզբունքով: Խորհրդի լիազորությունների ժամկետը 2 տարի է, որի ընթացքում կարող է տեղի ունենալ Խորհրդի անդամների մասնակի փոփոխություն՝ քուլեջն ավարտելու և նոր ուսանողների ընդունելության հետ կապված:

3.2 Խորհրդի ղեկավար մարմինը նախագահն է, կառուցվածքային ստորաբաժանումները՝ հանձնաժողովները:

#### **3.3 Խորհրդի նիստերը՝**

3.3.1 Խորհրդի նիստերը գումարվում են կիսամյակում առնվազն 2 անգամ:

Արտահերթ ժողովներ հրավիրվում են ըստ անհրաժեշտության:

3.3.2 Խորհրդի նիստերը համարվում են լիազոր՝ Խորհրդի անդամների առնվազն երկու երրորդի մասնակցության դեպքում: Խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին ներկա անդամների ձայների մեծամասնությամբ, եթե Խորհուրդն այդ մասին այլ որոշում չի ընդունում:

3.3.3 Խորհուրդը ընդունում է իր Կանոնակարգը:

3.3.4 Խորհուրդը հաստատում է իր գործունեության տարեկան աշխատանքային պլանը:

3.3.5 Լսում և քննարկում է իր նախագահի և հանձնաժողովների

հաշվետվությունները, ինչպես նաև վերջիններիս կողմից ներկայացվող հարցերը:

3.3.6 Քննարկում է այլ հարցեր և ընդունում համապատասխան որոշումներ:

3.3.7 Ընտրում է Խորհրդի նախագահ՝ երկու տարի ժամկետով: Խորհրդի նախագահ կարող է ընտրվել Խորհրդի անդամ հանդիսացող յուրաքանչյուր ուսանող:

3.3.8 Խորհրդի նախագահի ընտրությունը կատարվում է Խորհրդի նիստում՝ փակ գաղտնի քվեարկությամբ (եթե այդ մասին այլ որոշում չի կայացվում): Նախագահի թեկնածուն համարվում է ընտրված, եթե նրա օգտին քվեարկել է Խորհրդի ներկա անդամների մեծամասնությունը:

3.3.9 Ընտրում է Խորհրդի փոխնախագահ, քարտուղար և հանձնաժողովների նախագահներ:

### **3.4 Խորհրդի նախագահը.**

3.4.1 Ղեկավարում է ուսանողական խորհուրդը և կազմակերպում Խորհրդի աշխատանքը:

3.4.2 Ներկայացնում է Խորհուրդը պետական և վարչական մարմիններում, հասարակական կազմակերպություններում, զանգվածային լրատվության միջոցներում քոլեջի կանոնադրության համաձայն:

3.4.3 Խորհրդի հաստատմանն է ներկայացնում Խորհրդի գործունեության պլանը:

3.4.4 Իր գործունեության վերաբերյալ հաշվետվություն է ներկայացնում Խորհրդին և Տնօրենին:

3.4.5 Իր բացակայության ժամանակ նախագահի պարտականությունների կատարումը դնում է Խորհրդի փոխնախագահի վրա:

3.4.6 Իրականացնում է սույն Կանոնակարգով հաստատված այլ լրագրություններ:

3.4.7 Խորհրդի փոխնախագահի թեկնածուն ընտրվում է Խորհրդի անդամներից, առաջադրվում է հախագահի կողմից, այնուհետև հաստատվում խորհրդի նիստում:

3.4.8 Խորհրդի փոխնախագահը մասնակցում է խորհրդի աշխատանքների ղեկավարմանը, կոորդինացնում է ուսխորհրդի աշխատանքները, հետևում է Խորհրդի ընդունած որոշումների կատարմանը, համակարգում է հանձնաժողովների աշխատանքը, կատարում է Խորհրդի նախագահի հանձնարարականները:

3.4.9 Խորհրդի քարտուղարի թեկնածուն ընտրվում է Խորհրդի անդամներից, առաջադրվում է նախագահի կողմից, այնուհետև հաստատվում է Խորհրդի կողմից:

3.4.10 Խորհրդի քարտուղարը կազմակերպում է Խորհրդի գործավարությունը, տնօրինում է արխիվը, կատարում է կազմակերպչական աշխատանքներ:

### **3.5 Խորհուրդն իր գործունեության հիմնական ուղղությունների իրականացման համար ձևավորում է հետևյալ հանձնաժողովները՝**

- ուսումնամասնագիտական
- մշակութային
- սպորտի և ռազմահայրենասիրական
- ուսանողների հետ կապի և տեղեկատվական

3.5.1 Որպես դիտորդներ՝ խորհրդի հանձնաժողովների կազմում կարող են ընդգրկվել նաև Խորհրդի անդամ չհանդիսացող ուսանողներ:

3.6 Հանձնաժողովների նախագահների թեկնածուներն առաջադրվում են Խորհրդի նախագահի կողմից և հաստատվում Խորհրդի նիստում:

3.6.1 Ղեկավարում են վերոնշյալ հանձնաժողովները:

3.6.2 Ընթացիկ ժամանակահատվածի համար կազմում են հանձնաժողովների աշխատանքային պլաններ:

3.6.3 Հաշվետվություն են ներկայացնում հանձնաժողովների աշխատանքների վերաբերյալ Խորհրդին:

## **IV. ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

### **4.1 Խորհրդի անդամներն իրավունք ունեն.**

4.1.1 Ընտրել և ընտրվել Խորհրդի ղեկավարի մարմիններում:

4.1.2 Սույն Կանոնակարգի համաձայն մասնակցել Խորհրդի կառավարմանը:

4.1.3 Մասնակցել Խորհրդի կողմից անցկացվող միջոցառումներին:

4.1.4 Խորհրդի ղեկավար կառույցներին ներկայացնել նրա գործունեության վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ:

4.1.5 Ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն Խորհրդի աշխատանքի վերաբերյալ:

4.1.6 Դուրս գալ Խորհրդի կազմից՝ նախագահին ներկայացվող գրավոր դիմումի համաձայն:

#### **4.2 Խորհրդի անդամները պարտավոր են՝**

4.2.1 Օժանդակել Խորհրդի հեղինակության ամրապնդմանը, գործունեության ընդարձակմանը և կատարելագործմանը:

4.2.2 Ակտիվ մասնակցություն ցուցաբերել Խորհրդի կողմից անցկացվող միջոցառումների, ծրագրերի մշակմանը և նրանց իրականացմանը:

4.2.3 Պահպանել սույն Կանոնակարգը:

4.2.4 Կատարել Խորհրդի ղեկավար մարմինների որոշումները:

4.2.5 Կատարել ստանձնած պարտականությունները:

4.2.6 Խուսափել գործողություններից, որոնք կարող են վնասել Խորհրդի կամ նրա անդամների շահերին:

#### **4.3 Խորհրդի անդամների լիազորությունները կարող են վաղաժամկետ դադարեցվել հետևյալ դեպքերում.**

- Նախագահի կողմից՝ գլխավոր ժողովներից պարբերաբար բացակայելու, որոշումները չկատարելու, կարգապահական խախտումների և քոլեջի կանոնադրությամբ սահմանված ուսանողի պարտականությունները չկատարելու դեպքում,
- Խորհրդի կողմից անվստահություն հայտնելու դեպքում՝ նույն խորհրդի գլխավոր ժողովի որոշմամբ,
- Ուսումնառությունն ավարտելուց հետո ուսանողական համակարգից ազատվելու դեպքում,
- Քոլեջից հեռացվելու կամ դուրս մնալու դեպքում,
- Անձնական դիմումի համաձայն,
- Քոլեջին բարոյական կամ նյութական վնաս պատճառելու դեպքում

4.3.1 Խորհրդի անդամի լիազորությունների դադարեցման մասին որոշումն ընդունում է Խորհրդի նախագահը:

### **V. ԽՈՐՀՐԴԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ**

5.1 Խորհուրդն անվճար օգտվում է քոլեջի տարածքային, գույքային միջոցներից և նյութատեխնիկական բազայից: Անհրաժեշտության դեպքում քոլեջը տրամադրում է ֆինանսական միջոցներ:

5.2 Քոլեջի կողմից Խորհրդին տրամադրված նյութական և ֆինանսական միջոցները տնօրինում է Խորհրդի նախագահը: Ֆինանսական ծախսերը իրականացնում է

Խորհրդի նախագահը, որի մասին նա հաշվետվություն է ներկայացնում Խորհրդին և Տնօրենին:

## **VI. ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ, ԽՈՐՀՐԴԻ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ**

6.1 Սույն Կանոնակարգը ուժի մեջ է մտնում Խորհրդի կողմից ընդունվելուց և կառավարման խորհրդի կողմից հաստատվելուց հետո:

6.2 Խորհրդի Կանոնակարգում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել Խորհրդի կողմից՝ նրա անդամների երկու երրորդի ներկայության դեպքում, ներկաների ձայների պարզ մեծամասնությամբ:

6.3 Խորհուրդը լուծարվում է քվեջի կանոնադրությամբ սահմանված կարգով՝ խորհրդի կամ քվեջի տնօրենի որոշմամբ:

